

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2015

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2014 թվականին
կատարված աշխատանքների մասին**

Նախարան

2014 թվականին ԼՂՀ-ում իրականացվող պետական ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտնտեսական կայունության, տնտեսական աճի բարձր տեմպերի, պետության ֆինանսական միջոցների բաշխման և վերաբաշխման գործընթացների արդյունավետության ապահովմանը:

2014 թվականի համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 188.8 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 8.9 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 1,268.1 հազ. դրամ՝ 2013 թվականի 1,137.9 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2010	2011	2012	2013	2014
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	118,187.2	135,498.5	150,015.7	168,563.6	188,840.3
ՀՆԱ-ի իրական աճ/ նվազում (%)	5.5	9.1	9.9	9.3	8.9
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	823.2	936.1	1,023.0	1,137.9	1,268.1
Արդյունաբերության իրական աճ/ նվազում (%)	105.3	100.8	99.2	110.0	117.2
Գյուղատնտեսության իրական աճ/ նվազում (%)	88.7	120.1	123.9	109.2	95.7
Շինարարության աճ/ նվազում (%)	124.0	101.4	87.4	118.1	111.7
Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ)	23,807.5	25,756.4	28,755.6	27,919.3	31,485.4
Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ)	62,182.4	67,377.0	67,343.8	69,623.2	78,126.5

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտները կազմել են 31,485.4 մլն դրամ, ընդ որում՝ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 30,210.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի կատարումը 100.3%-ով:

2014 թվականի պետական բյուջեն հաջողվել է կատարել առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի էական կուտակման: Բոլոր հիմնավորված

պարտավորությունները, որոնք ստանձնվել են պետական մարմինների կողմից, ֆինանսավորվել են նախատեսված չափերով: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: Հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 78,126.5 մլն դրամ:

2014 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նաև Նախարարություն) գործունեությունն ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

Բյուջետային քաղաքականություն

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված էր բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացի ապահովմանը:

«ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն աշխատանքներ են իրականացվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2014 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների

վերաբերյալ:

ԼՂՀ վարչապետի 2014 թվականի մայիսի 6-ի «ԼՂՀ 2015 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 188-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2015 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

ա/ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

բ/ Ստեփանակերտի քաղաքապետարանից և շրջանների համայնքներից ստացված ԼՂՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

գ/ ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են «ԼՂՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», «ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և

նախագծի բացատրագիրը ու ներկայացվել է ԼՂՀ կառավարության քննարկմանը: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի ու «ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեում փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 7 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ զուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: Պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը 2013 թվականի ֆինանսատնտեսական

գործունեության արդյունքով ստացված զուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 3-ին:

Նախարարության ամենօրյա ուշադրության և հսկողության կենտրոնում են գտնվել արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և հրատապ ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

2014 թվականին ներգրավված փոխառու միջոցներից 16,421.3 մլն դրամը ուղղվել է ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորմանը: Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման նպատակով կնքված պայմանագրերի համաձայն 2014 թվականին տրամադրվել է 1,531.8 մլն դրամի տոկոսավճար, ինչպես նաև մարվել է նախորդ տարիների փոխառությունների գումարը՝ 12,548.2 մլն դրամ:

ԼՂՀ կառավարության մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվին 2014 թվականին նպատակային ծրագրերի իրականացման համար մուտքագրվել է 16,725.1 հազ. ԱՄՆ դոլար: Ստացված միջոցներից նույն ժամանակահատվածում քաղաքաշինության, կրթության և առողջապահության բնագավառներում նպատակային ծրագրերի համար ֆինանսավորվել է 11,365.6 հազ. ԱՄՆ դոլար:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամսյա հաշվետվություններ:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքում սահմանված որոշ հասկացությունների հստակեցման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների արտաբյուջետային հաշիվների կանոնակարգման, ինչպես նաև պետական բյուջեի եկամտատեսակները գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով մշակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 25-ին:

Մշակվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև դրանից բխող թվով 7 օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը, որոնց համաձայն հստակեցվել են պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության վերաբերյալ որոշ դրույթներ: Վերոհիշյալ օրինագծերը ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են 2014 թվականի հոկտեմբերի 29-ին:

Գանձապետական համակարգ

2014 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Ամբողջ ծավալով և առանց ուշացումների վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 448 իրավաբանական անձանց (44 պետական կառավարման մարմին, 231 տեղական ինքնակառավարման մարմին, 18 բյուջետային հիմնարկ, 138 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 16 փակ բաժնետիրական ընկերություն և 1 այլ հիմնարկ) 6563 գանձապետական հաշիվներով, որից 1951՝ պետական բյուջեի, 4419՝ համայնքային բյուջեների, 193՝ արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը,

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը

կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից,

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքում նախնական հսկողություն է իրականացվել բյուջետային հիմնարկների կողմից կատարվող վճարումների ճշտության և նպատակայնության նկատմամբ,

➤ պատրաստվել են ամենօրյա և ամենամսյա տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման մասին,

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին (գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն,

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցելու նկատմամբ,

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկություններից, տեղական գանձապետական բաժիններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են պետական բյուջեի կատարման 2013 թվականի, 2014 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և սահմանված ժամկետներում ներկայացվել ԼՂՀ կառավարություն,

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին,

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար,

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 257 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 238-ը,

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 49 գրության հիման վրա նրանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները,

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարված, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում վճարված պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով: Ընդունվել է 100 դիմում, որից բավարարվել է 99-ը,

➤ 2014 թվականի դեկտեմբերի 19-ին հրավիրվել է խորհրդակցություն շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական և համայնքային բյուջեների կատարման հարցերը, ինչպես նաև մինչև տարեվերջ համայնքների բյուջեների սպասվելիք եկամուտները և ծախսերը:

Ֆինանսական վերահսկողություն

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 118 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 22 բյուջետային հիմնարկներում, 62 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 22 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 1 հիմնադրամում, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, 5 քաղաքային և 5 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել են 40,558.2 հազ. դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- անօրինական դուրսգրումներ, վճարումներ և ծախսեր՝ 7,511.5 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 7,064.0 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 260.4 հազ. դրամ և ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 187.1 հազ. դրամ,

- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 8,834.4 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 8,453.3 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 198.1 հազ. դրամ և ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 183.0 հազ. դրամ,

- նախահաշիվներով ավել նախատեսված գումարներ՝ 329.9 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,

- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 16,097.9 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 15,022.1 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 793.5 հազ. դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 282.3 հազ. դրամ,

- նորմերի խախտումներ՝ 2,916.4 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 2,688.4 հազ. դրամ և ձեռնարկության հաշվին՝ 228.0 հազ. դրամ,

- գերաձախ՝ 315.2 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 211.9 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 103.3 հազ. դրամ,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 586.8 հազ. դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման,

- ավելցուկ՝ 3,961.7 հազ. դրամ,

- պակասորդ՝ 4.4 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 40,558.2 հազ. դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 19,349.7 հազ. դրամ, որից՝ պետական բյուջե՝ 13,474.3 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 285.6 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 384.5 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 1,239.2 հազ. դրամ, ավելցուկ՝ 3,961.4 հազ. դրամ, պակասորդ՝ 4.4 հազ. դրամ:

Ապառքի գումարները կազմում են 21,208.5 հազ. դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 15,831.0 հազ. դրամ, համայնքային բյուջեին՝ 4,178.7 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1,198.8 հազ. դրամ:

Նախորդ՝ 2013 թվականին կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2014 թվականին վերականգնվել/վերաձևակերպվել է 44,901.9 հազ. դրամ, որից՝ պետական բյուջե՝ 6,940.0 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 2,137.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 37.0 հազ. դրամ և հաշվառումով վերաձևակերպման ենթակա՝ 35,787.7 հազ. դրամ:

Ընդամենը 2014 թվականին պետական բյուջե է վերականգնվել 20,414.3 հազ. դրամ, որից՝ 2014 թվականի արդյունքներով՝ 13,474.3 հազ. դրամ, 2013 թվականի ապառքի գումարներից՝ 6,940.0 հազ. դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 2,422.8 հազ. դրամ, որից՝ 2014 թվականի արդյունքներով՝ 285.6 հազ. դրամ, 2013 թվականի ապառքի գումարներից՝ 2,137.2 հազ. դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 421.5 հազ. դրամ, որից՝ 2014 թվականի արդյունքներով՝ 384.5 հազ. դրամ, 2013 թվականի ապառքի գումարներից՝ 37.0 հազ. դրամ: Հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 37,026.9 հազ. դրամ, որից՝ 2014 թվականի արդյունքներով 1,239.2 հազ. դրամ, 2013 թվականի ապառքի գումարներից՝ 35,787.7 հազ. դրամ:

2014 թվականի արդյունքներով ավելցուկից վերականգնվել է 3,961.7 հազ. դրամ, իսկ պակասորդից՝ 4.4 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով երկու հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանություն:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորում

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2014 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված էին հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել և ընդունվել են հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 6-ի «ԼՂՀ

Ֆինանսների նախարարության 2008 թվականի մարտի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվապահների որակավորման քննությունների հարցերի (թեստերի) ցանկը (հարցաշարը), ծրագիրը, որի շրջանակներում կազմվելու են հարցաթերթիկում ներառվող խնդիրները, քննությունների ընթացքում օգտվելու համար թույլատրվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը հաստատելու մասին» թիվ 42 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 24-Ն հրամանը.

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի մարտի 6-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարության 2008 թվականի մայիսի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների հարցերը (թեստերը) և տիպային խնդիրները հաստատելու մասին» թիվ 74 հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 25-Ն հրամանը:

2014 թվականին կազմակերպված հաշվապահների որակավորման 8 քննությունների արդյունքներով որակավորվել է 8 հաշվապահ, իսկ աուդիտորների որակավորման 4 քննությունների արդյունքներով՝ 3 աուդիտոր:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ որակավորված հաշվապահների քանակը կազմել է 30, իսկ որակավորված աուդիտորների քանակը՝ 11 հոգի:

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի համաձայն 2013 թվականի գործունեության արդյունքներով խոշոր կազմակերպությունների ցանկը ճշտվել և տեղադրվել է Նախարարության ինտերնետային կայքում: Ցանկում ներառված 56 կազմակերպություններից 47-ը (84%) ենթարկվել են պարտադիր աուդիտի:

Ամփոփվել են աուդիտ իրականացնող անձանց կողմից ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացված եռամսյակային հաշվետվությունները, որոնց համաձայն 2014 թվականի ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից անց է կացվել 37 պարտադիր և 2 կամավոր աուդիտ: Հաշվետու տարվա ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվել են նաև օրենքով չարգելված այլ ծառայություններ:

Տարվա ընթացքում իրականացվել են հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ: Մասնավորապես, սեմինար-խորհրդակցություններ են կազմակերպվել ԼՂՀ պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների,

հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ԼՂՀ Քաշաթաղի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում գրանցված պետական կառավարչական հիմնարկների, բյուջետային հիմնարկների, ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների հաշվապահների համար:

Առանձին սեմինար-խորհրդակցությունների միջոցով ներկայացվել են «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի ընդունման հետ կապված արձակուրդային գումարների և անաշխատունակության նպաստների հաշվարկման առանձնահատկությունները:

Կատարվել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հիմնարկներում հաշվապահական հաշվառման կազմակերպման և վարման գործընթացի ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա մեկնաբանություններ և պարզաբանումներ են տրվել մի շարք հարցերի շուրջ:

Մամուլում տպագրվել է եկամտային հարկի ներդրմամբ պայմանավորված ամենամյա արձակուրդային գումարների և անաշխատունակության նպաստների հաշվարկման համար հիմք հանդիսացող միջին ամսական աշխատավարձի հաշվարկման, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման և կազմակերպություններում պաշարների հաշվառման առանձնահատկությունները պարզաբանող 6 նյութ:

Ընդունվել են ԼՂՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների եռամսյակային հաշվետվությունները:

Մշակվել են ԼՂՀ շրջանների վարչակազմերի հանրակրթական դպրոցների կենտրոնացված հաշվապահությունների գործունեության դադարեցման հետևանքով ԼՂՀ «Շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» ՊՈԱԿ-ի և առանձին հանրակրթական դպրոցների՝ որպես ՊՈԱԿ հիմնադրմամբ պայմանավորված՝ բյուջետային հիմնարկների հաշվային պլանից գործող հաշվային պլանին անցման ցուցումները:

Գնումների գործընթացի կարգավորում

2014 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 1000 գնման հաշվետվությունների,

- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2014 թվականին իրականացվող գնումների պլանում փոփոխություն կատարելու վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 241 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 29 գրություններ,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր՝ բաց ընթացակարգով գնում կատարելու թվով 80 հայտարարություններ և հրավերներ, պարզեցված ընթացակարգով գնում կատարելու թվով 83 հայտարարություններ և հրավերներ, թվով 111 նախատրակավորման հայտարարություններ, շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների վերաբերյալ թվով 46 տեղեկություններ,

- ստուգվել և ամփոփվել են 2013 թվականի տարեկան հաշվետվությունները ու պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կողմից ներկայացված 2015 թվականի գնումների պլանները:

Առաջին անգամ մշակվել և հրապարակվել են «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը», որը հեշտացնում է պետական պատվիրատուների գործողությունները գնման ընթացակարգերի կազմակերպման հարցում և նվազեցնում տեխնիկական սխալների հավանականությունը:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված պահանջների կատարման և գնումների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատման է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» որոշման նախագիծը (հաստատվել է 2014 թվականի հունիսի 19-ի 384-Ն որոշմամբ):

Գնումների համակարգի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև «Գնումների մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի թիվ 133-Ն որոշման պահանջների կատարման ապահովման նկատառումներից

ելնելով՝ 2014 թվականի ընթացքում մշակվել և ընդունվել են.

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 25.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը սահմանելու մասին» N 14-Ն հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 25.02.2014թ. «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների ընտրանքային գնահատման կարգը և գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրամանը,

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 25.02.2014թ. «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթի և դրա գնահատման կարգը հաստատելու մասին» N 16-Ն հրամանը,

-ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 09.04.2014թ. «ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հունվարի 22-ի «Գնումների մասին» ԼՂՀ օրենսդրության իմացության գնահատման նպատակով թեստավորման հարցաշարը հաստատելու մասին» N 9-Ն հրամանով հաստատված հավելվածում փոփոխություններ կատարելու մասին» N 43-Ն հրամանը:

«Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումների կատարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցման (հրավերների ուղարկման) համակարգը:

Տարվա ընթացքում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքվել է 42 շրջանակային համաձայնագիր: Ընդհանուր առմամբ կնքված շրջանակային համաձայնագրերի թիվը տարեվերջի դրությամբ կազմել է 193, իսկ մեկ ընթացակարգի հաշվով՝ 12:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման, գնման առարկայի բնութագրերի ստուգման և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջներում խտրականության բացառման պայմանների պահպանման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ուսումնասիրվել է գնումների էլեկտրոնային

տեղեկատվում հրապարակված 264 հրավեր և հայտարարություն, որոնցից 26-ում կամ 9.8%-ում հայտնաբերվել են անհամապատասխանություններ: Անհամապատասխանությունների շտկման նպատակով գրությամբ տեղեկացվել են համապատասխան պատվիրատուները:


Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 2014 թվականի ընթացքում ստացվել է մեկ բողոք, որի քննությունից հետո այն բավարարվել է:

2014 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցության շրջանակներում Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից համատեղ կազմակերպած «Առևտրի համաշխարհային կազմակերպության» պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի նախագծի քննարկմանը:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 17,267.6 մլն դրամ, որից 13,352.0 մլն դրամը (77.3 տոկոսը) մրցակցային հիմունքներով կատարված գնումներն են: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 160.1 մլն դրամի կամ հատկացված գումարի 1.2 տոկոսի չափով:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԼՂՀ օրենսդրության համաձայն ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2014 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 78 հաշվետվություն, որոնք բոլորն էլ վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է գծապատկերում:



Գծապատկեր. ներկայացված հաշվետվությունների քանակը ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)

Լիցենզավորում

ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման համաձայն ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում» գործունեության տեսակների, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզավորում:

Պայմանավորված «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն լիցենզավորման պահանջը հանվել է գործունեության որոշակի տեսակների համար, իսկ գործունեության երկու տեսակի անվանումները խմբագրվել են՝ դադարեցվել է 7 և վերաձևակերպվել 4 լիցենզիա:

Հաշվետու տարում տրամադրվել է վիճակախաղերի կազմակերպման 1 լիցենզիա («ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂԱՂ» ՓԲԸ), ոգելից խմիչքների արտադրության 4 լիցենզիա, դիմումի համաձայն դադարեցվել է աուդիտորական ծառայությունների իրականացման 1 լիցենզիա, ոգելից խմիչքների արտադրության 4 լիցենզիա:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2014 թվականի ընթացքում Նախարարության կողմից՝

- միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար՝ հաշվետու տարվա ընթացքում հավաքագրվել է մոտ 11.8 մլն դրամ պետական տուրք.

➤ ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությանը և ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների և գանձված պետական տուրքերի վերաբերյալ.

➤ գումարվել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության լիցենզավորող հանձնաժողովի 8 նիստ՝ նվիրված լիցենզիայի տրամադրման, լիցենզիաների վերաձևակերպման, ինչպես նաև լիցենզիաների գործողության դադարեցման հարցերի քննարկմանը:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ ուժի մեջ է աուդիտորական ծառայությունների իրականացման 2, վիճակախաղերի կազմակերպման 1 և պարզ ընթացակարգով տրված 21 լիցենզիա:

Ֆինանսական շուկայի զարգացում

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից ամփոփվել են **ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության** (ԱՊՊԱ) համակարգի գործունեության 2014 թվականի արդյունքները: Հաշվետու տարում ԼՂՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 6 ապահովագրական ընկերություններ՝ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող մոտ 20 գործակալների միջոցով: 2014 թվականին ապահովագրվել է 10,035 ավտոմեքենա: Այդ ընթացքում 1,117 ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է 176.0 մլն դրամի չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

ԱՊՊԱ ոլորտում առկա խնդիրների լուծման նպատակով 2014 թվականի դեկտեմբերի 2-ին կազմակերպվել է հանդիպում Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի, ՀՀ կենտրոնական բանկի, ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ԼՂՀ առողջապահության նախարարության, հանրապետական ու շրջանային հիվանդանոցների ներկայացուցիչների և ԼՂՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների գործակալների միջև:

Հանդիպման ժամանակ քննարկվել են ԱՊՊԱ համակարգին ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածների մասին

տեղեկացմանը, դիմումներ վերցնելու կանոնների պահպանմանը, կանխավճարային համակարգի, պետական պատվերի ուղեգրերի, բժշկական փաստաթղթերի լրացման հետ կապված հարցերին վերաբերող խնդիրները: Ակտիվ քննարկման են արժանացել նաև ԱՊՊԱ ոլորտում տուժածների առողջության վերականգնման ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուժհաստատությունների և ապահովագրական ընկերությունների համագործակցության հարցերը:

Կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- մշակվել է «Նույնականացման քարտ կարդացող սարքերը բաշխելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որի համաձայն ամսական հաշվետվություն ներկայացնող բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձինք (մոտ 2500 անձ) անվճար ապահովվել են նույնականացման քարտ կարդացող սարքերով.

- հարկային գործակալ չհանդիսացող անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտային հարկի անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հարկային գործակալ չհանդիսացող անհատ ձեռնարկատերերի կողմից տարեկան եկամուտների մասին հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների մասին» որոշումը, որի համաձայն՝ հարկային գործակալ չհանդիսացող անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև 2015 թվականի մարտի 1-ը նույնականացման քարտ (էլեկտրոնային ստորագրություն) և մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից օգտվողի անուն ու գաղտնաբառ ստանալու դեպքում պետական տուրքի գումարը և էլեկտրոնային ստորագրությունների սպասարկման վարձավճարը 2015 թվականի համար կվճարվի պետական բյուջեի միջոցներից:

Տնտեսական քաղաքականություն

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը

պետական աջակցության 2015 թվականի ծրագրին հավանություն տալու մասին»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը
հաստատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014
թվականի նոյեմբերի 28-ի N 23/4 արձանագրային որոշմամբ և պետական բյուջեի
նախագծի հետ ներկայացվել է Ազգային ժողով: Ծրագիրը նպատակ է հետապնդում
ընդլայնել ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունները,
նորարարական և արտաքին տնտեսական գործունեությունը, տեղեկատվական և
հեռահաղորդակցության տեխնոլոգիաների, ինչպես նաև բիզնես
ենթակառուցվածքների ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի
38-րդ հոդվածով սահմանված կարգով կանոնադրական կապիտալում կատարած
ներդրումների համար արտոնություն ստանալու նպատակով 2014 թվականի
ընթացքում հայտ է ներկայացրել 1 կազմակերպություն: Նախարարության կողմից
ուսումնասիրվել և վերլուծվել են հայտով ներկայացված փաստաթղթերը, կատարված
704.4 մլն դրամ ներդրումներից 617.3 մլն դրամը գնահատվել է որպես
փաստաթղթերով հիմնավորված արտադրական նպատակով կատարված ներդրում:
Ուսումնասիրությունների արդյունքներով կազմվել ու ներդրումները գնահատող և
արտոնություն տրամադրող հանձնաժողովին են ներկայացվել կատարված
ներդրումների վերաբերյալ եզրակացությունը և որոշման նախագիծը, համաձայն որի
կազմակերպություններին տրամադրվել է 61.7 մլն դրամի չափով հարկային
արտոնություն:

Շահութահարկի արտոնությունից օգտվող կազմակերպությունների կողմից
տարեկան հաշվետվություններով ներկայացված փաստաթղթերը Նախարարության
կողմից ընդունվել, ուսումնասիրվել և ամփոփվել են՝ ԼՂՀ կառավարության 2009
թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշմամբ սահմանված կարգին
համապատասխան:

Ընդհանուր առմամբ 2010-2014թթ. շահութահարկի արտոնություն են ստացել
թվով 6 կազմակերպություններ, որոնց կանոնադրական կապիտալում կատարված
ներդրումներից 3,864.1 մլն դրամը գնահատվել է որպես արտադրական նպատակով
կատարված ներդրումներ և տրամադրվել է 386.4 մլն դրամի արտոնություն:

Աշխատանքներ են իրականացվել նաև շահութահարկի արտոնություն
ստանալու համար ներկայացվող պահանջների հստակեցման, գործընթացի

կատարելագործման ուղղությամբ. մշակվել է «ԼՂՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 5-ի N 496-Ն որոշմամբ:

Շարունակվել են աշխատանքները պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների հաստատման միասնական մոտեցման կիրառման ուղղությամբ:

ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշման համաձայն 2014 թվականին ընդունվել է մատուցվող ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությանը ներկայացրած 1 պետական ոչ առևտրային կազմակերպության հայտ: Կատարելով հայտով ներկայացված հաշվարկ-հիմնավորումների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ թվով 108 ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ տրվել է համաձայնություն:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Կարևորելով բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի դերը ԼՂՀ տնտեսական աճի և տնտեսական մրցունակության ապահովման գործում՝ Նախարարության գործունեությունը ուղղված էր գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավմանը:

ԼՂՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված՝ գործարարությամբ զբաղվելու հետ առնչվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, փոքր և միջին ձեռնարկությունների աճի խթանմանը, հարկային հաշվետվությունների կրճատմանը և պարզեցմանը, հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» իրականացման նպատակով 2014 թվականին Նախարարության կողմից աշխատանք է տարվել միջոցառումների կատարման համար պատասխանատու բոլոր գերատեսչությունների հետ, նրանց կողմից ներկայացված հաշվետվությունները ընդունվել, ամփոփվել ու ներկայացվել են ԼՂՀ

կառավարության աշխատակազմ:

ԼՂՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2014 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 52-Ա որոշման պահանջներին համապատասխան Նախարարության կողմից ստեղծվել է նոր ինտերնետային կայք (www.artsakh-product.am)՝ տեղական արտադրողների և տեղական արտադրանքի (ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվական նյութերի տեղադրման և տարածման նպատակով: Կայքի ստեղծման միջոցով կխթանվի տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների իրացումը, ինչպես նաև արտահանման, ներդրումային գրավչության բարձրացումը:

Առևտրի և շուկայի կարգավորում, որակի ենթակառուցվածք

Հաշվետու տարում **առևտրի և ծառայությունների** ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված էր ոլորտի գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Մշակվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 18-ին: Նշված օրենքի համաձայն ընդլայնվել է դրոշմապիտակներով հաշվառման համակարգի կիրառության շրջանակը՝ ներառելով նաև լայն սպառման այնպիսի ապրանքատեսակներ, ինչպիսիք են՝ կաթնեղեն, սուրճ, թեյ, ձեթ, պատրաստի կամ պահածոյացված մթերքներ մսից և ձկնից, պահածո բանջարեղենից և մրգերից, պաղպաղակ, քացախ, օճառ, մազերի խնամքի, կոսմետիկ և լվացող միջոցներ:

«Չափումների միասնականության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ մշակվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N521 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ կառավարության 2014 թվականի մայիսի 27-ին N 322-Ն որոշմամբ: Համաձայն վերոհիշյալ որոշման՝ փոփոխության են ենթարկվել գազի կենցաղային, միաֆազ և եռաֆազ էլեկտրական հաշվիչների ստուգաչափման աշխատանքների սակագները:

Համապատասխանության հավաստման բնագավառում իրականացված աշխատանքների թվում հավատարմագրման վկայագրեր են տրվել «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ հացահատիկային ու բանջարանաբուստանային կուլտուրաների սերմերի փորձարկման լաբորատորիային և ԼՂՀ առողջապահության նախարարության «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ի սանիտարահիգիենիկ և մանրէաբանական լաբորատորիաներին:

Միաժամանակ նախկինում հավատարմագրված «Պրոֆիլ» ՍՊԸ, «Արտադրական կոմբինատ-3» ՓԲԸ, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ և «Սեյսմիկ Պաշպանության Արևելյան Ծառայություն» ՊՈԱԿ-ի փորձարկման լաբորատորիաներում հսկողության նպատակով կատարվել են պարբերական գնահատման աշխատանքներ:

Ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և համապատասխանության գնահատման ոլորտներում իրականացված քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված էր նշված ոլորտների զարգացմանը, սպառողների կյանքի, առողջության պահպանմանը, շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի արտադրման և ծառայությունների մատուցման ու դրանց որակի ապահովմանը:

«Ստանդարտացման մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետին համապատասխան՝ մշակվել և ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N106-ն հրամանով հաստատվել է ԼՂՀ «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչը»:

«Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- տնտեսվարող սուբյեկտների հետ կնքվել են 8 պայմանագրեր և տրամադրվել 141 ստանդարտներ՝ տեղեկատվության տրամադրման և լաբորատոր փորձարկումների իրականացման նպատակով.

- կատարվել են տնտեսվարող սուբյեկտների կողմից հաստատված տեխնիկական պայմանների 26 փորձաքննություն և գրանցում.

- տրամադրվել են տեղական արտադրանքի 58 և հանրային սննդի ծառայության մատուցման 49 համապատասխանության սերտիֆիկատներ.

-կատարվել են հսկողության աշխատանքներ՝ նախկինում սերտիֆիկատ տրամադրված արտադրանքի արտադրման և հանրային սննդի կազմակերպման 31 սուբյեկտների նկատմամբ.

-կատարվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված արտադրանքների փորձարկումներ, որոնց արդյունքում կազմվել և տրամադրվել են 153 համապատասխանության եզրակացություններ.

- լաբորատորիայի 2 աշխատողներ մասնակցել են ՀՀ «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ ուսուցման կենտրոնի կողմից անցկացվող որակավորման դասընթացներին և ստացել համապատասխան վկայականներ.

-չափման միջոցներ օգտագործող տնտեսվարող սուբյեկտներում պարբերական ստուգաչափման են ենթարկվել 1093 կշեռքներ, 288 կշոաքարեր, 92 վառելիքաբաշխիչ աշտարակներ, 8431 էլեկտրական և գազի հաշվիչներ, 20 ավտոմոբիլային կշեռքներ, 93 ավտոմոբիլային սակահաշվիչներ և արագաչափեր, 7 ավտոցիստերններ և 76 այլ չափման միջոցներ:

Հսկողություն սպառողների շահերի պաշտպանության ոլորտում

Սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության կողմից ուսումնասիրություններ են իրականացվել հանրապետությունում գործող թվով 80 տնտեսվարող սուբյեկտներում՝ ոչ պարենային արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների, բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) անվտանգության ապահովման և օրենսդրության համապատասխանության ուղղությամբ:

ԼՂՀ վարչապետի 2014 թվականի փետրվարի 25-ի թիվ 60-Ա որոշման համաձայն տեսչությունն ընդգրկվել է «Սեղմված գազ» ապրանքային շուկան ուսումնասիրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմում:

2014 թվականի հուլիսին ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության, ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի տրանսպորտի տեսչության և «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համատեղ ուսումնասիրություններ են անցկացվել Ստեփանակերտ քաղաքում գործող մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող տաքսի

ծառայություններում: Ուսումնասիրության արդյունքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող տաքսի ծառայություններում հայտնաբերված խախտումները վերացվել են:

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը մասնակցել է.

1. ԼՂՀ ԱՆ ՊՀՀՏ «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ փորձարկման լաբորատորիաները հավատարմագրելու նպատակով համապատասխանության գնահատմանը,

2. «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» ՓԲԸ փորձարկման լաբորատորիայի համապատասխանության գնահատմանը,

3. «Պրոֆիլ» ՍՊԸ ճանապարհաշինարարության փորձարկման լաբորատորիայի պարբերական գնահատմանը,

4. «Արտադրական կոմբինատ 3» ՓԲԸ շինանյութերի լաբորատորիայի պարբերական գնահատմանը,

5. «Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայություն» ՊՈԱԿ շինանյութերի փորձարկման լաբորատորիայի պարբերական գնահատմանը,

6. «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ փորձարկման լաբորատորիայի պարբերական գնահատմանը:

Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային ոլորտ

2014 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ստացել է 6048 փաստաթուղթ, որից 65-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել և ընթացքավորվել են, անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանկաշրջանում Նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 282 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	- 11
ԼՂՀ կառավարության որոշումներ	- 151
ԼՂՀ վարչապետի որոշումներ	- 105
ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամաններ	- 15

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել են դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Պետության դեմ գումարի բռնագանձման և վնասի փոխհատուցման պահանջով դատարան ներկայացված 15,330.0 հազ. ՀՀ դրամի չափով գումարի 1 հայցապահանջը Նախարարության կողմից իրականացված՝ պետության գույքային շահերի պաշտպանության աշխատանքների շնորհիվ բավարարվել է մասնակի՝ ընդամենը 180.8 հազ. ՀՀ դրամի չափով:

Ուշադրության կենտրոնում մշտապես պահելով բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը՝ Նախարարության աշխատողների կողմից իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար ընդունելություն):

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Պարբերաբար իրականացվել են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջի (mfe-nkr.am) ընթացիկ տեղեկատվական թարմացման և համալրման աշխատանքները: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն Նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջի միջոցով իրականացվում են գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

Կադրային ոլորտում Նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը: Քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով հաշվետու տարում կազմակերպվել է քաղաքացիական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար 3 մրցույթ, անցկացվել է անձնակազմի 26 վերապատրաստում և 18 ատեստավորում:

Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ:

«Արցախերկսևմետ» ՓԲԸ

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համակարգում գործող՝ «Արցախերկսևմետ» ՓԲԸ 2014 թվականի գործունեությունն ուղղված է եղել ընկերության կանոնադրական գործառույթների իրականացմանը:

Ընկերության իրացման ծավալը 2014 թվականին կազմել է 13.9 մլն դրամ: «Արցախերկսևմետ» ՓԲԸ 2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը ամփոփվել է 1,186.0 հազ. ՀՀ դրամ շահույթով:

ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսված ծրագրերի կատարողական ցուցանիշները, ինչպես նաև Նախարարության վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները բերված են համապատասխանաբար Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

ԼՂՀ 2013-2014թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին նախատեսված՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջոցով ֆինանսավորվող ծրագրերի կատարողականը

/ հազ. դրամ /

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	2013թ.	2014թ.			
					Դրամարկ-դային ծախս	Տարեկան հաստատ-ված պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ-դային ծախս	Դրամարկ-դային ծախսը տարեկան ճշտված պլանի նկատմամբ%
1	1	2	1	Օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը	265,386.5	339,773.6	416,575.0	319,514.1	76.7
1	1	2	03	Գնումների պաշտոնական տեղեկագրերի հրապարակման գործընթացի ապահովման և ընդհանուր օգտագործման ձևաթղթերի ու խիստ հաշվառման փաստաթղթերի պատրաստման ծախսեր	832.0	5,000.0	5,000.0	432.5	8.7
1	1	2	04	Ապահովագրական վճարներ և փոխհատուցումներ	-	5,000.0	5,000.0	-	-
1	1	2	05	ԼՂՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր	9,120.0	20,000.0	20,000.0	9,120.0	45.6
1	3	3	02	Պետական աջակցություն «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	36,824.5	39,931.5	41,241.5	39,289.6	95.3
1	7	1	01	Ներգրավված փոխառու միջոցների սպասարկման ծախսեր (տոկոսավճարներ)	1,634,493.9	1,690,000.0	1,690,000.0	1,531,803.6	90.6
1	8	1	01	Դոտացիաների տրամադրում համայնքների բյուջեներին	1,540,700.0	1,960,066.0	2,271,590.1	2,109,900.0	92.9
3	1	1	03	Արտագերատեսչական պահակության պահպանություն	108,521.5	150,000.0	195,000.0	174,781.8	89.6
3	3	2	03	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	-	150,000.0	-	-	-

Բաժին	Խումբ	Դաս	Օրագիր	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	2013թ.	2014թ.			
					Դրամարկ-դային ծախս	Տարեկան հաստատ-ված պլան	Տարեկան ճշտված պլան	Դրամարկ-դային ծախս	Դրամարկ-դային ծախսը տարեկան ճշտված պլանի նկատ-մամբ%
4	1	1	02	Պետական աջակցություն ԼՂՀ «Ստանդարտացման, չափագիտու-թյան և սերտիֆիկացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմա-կերպությանը	6,434.9	7,119.1	9,219.1	9,219.1	100.0
4	1	1	07	Աջակցություն Արցախի ներդրու-մային հիմնադրամին	2,000,000.0	2,500,000.0	2,500,000.0	2,500,000.0	100.0
4	1	1	08	Տնտեսական զարգացման ծրագրեր	4,000.0	30,000.0	30,000.0	1,070.0	3.6
8	2	4	02	Մուրացանի հիշատակի օրվա անցկացման միջոցառումներ	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	100.0
8	3	1	04	«Չայն արդարության» ռադիոկայանի պահպանում	7,102.1	7,540.2	8,116.9	8,082.6	99.6
8	3	2	01	Պետական աջակցություն թերթերին / «Ազատ Արցախ» թերթ	72,493.4	73,836.0	76,318.2	76,318.2	100.0
8	4	2	01	Նյութական աջակցություն ԼՂՀ ԱԺ ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություննե-րին և կուսակցությունների դաշինք-ներին	45,000.0	45,000.0	45,000.0	45,000.0	100.0
8	4	2	02	Պետական աջակցություն հասարա-կական կազմակերպություններին և ոչ պետական թերթերին	63,600.0	80,000.0	80,000.0	73,170.0	91.5
8	4	3	01	Կրոնի բնագավառի ծախսեր	50,000.0	60,000.0	60,000.0	60,000.0	100.0
10	4	1	15	Քաղաքացիների խնայողություննե-րի ինդեքսավորման ծախսեր	50,000.0	50,000.0	50,000.0	30,000.0	60.0
10	9	2	07	ԼՂՀ պաշտպանության նախարարու-թյան համակարգի կենսաթոշակների և այլ հատուցումների վճարման ծառայությունների ձեռքբերում	50,509.1	65,000.0	65,000.0	53,108.3	81.7
11	2	1	08	ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեից պետական տուրքի վճարումներ	17,816.1	-	18,682.4	18,682.4	100.0
ԸՆԴԱՄԵՆԸ					5,963,833.9	7,279,266.4	7,587,743.2	7,060,492.2	93.1

**ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վարչատնտեսական
գործունեությունը բնութագրող ցուցանիշները**

N/ N	Անվանումը	Չափման միավորը	2014թ.
1.	Աշխատողների միջին ցուցակային թիվը,	մարդ	135
	<i>որից՝ շրջաններում</i>	<i>մարդ</i>	<i>45</i>
2.	Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, տարեվերջի դրությամբ,	հատ	10
	<i>որից՝ շրջաններում</i>	<i>հատ</i>	<i>5</i>
3.	Պահպանման ծախսերը (փաստացի)	հազ. դրամ	319,514.1